



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Պրոբլեմային ուսուցման
մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման
գործընթացում»

Առարկան՝ Հայոց պատմություն և հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարիամ Գյումրյան

Ուսումնական հաստատություն՝ Ն.Վ. Գոգոլի անվան թիվ 35
հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1. Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը	
1.1 Ի՞նչ է պրոբլեմային ուսուցումը. էությունն ու նպատակները	5
1.2 Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի մեթոդներն ու տեսակները.....	7
1.3 Պրոբլեմային ուսուցման մակարդակները	8
Գլուխ 2. Պրոբլեմային ուսուցման կիրառումը պատմություն առարկայի դասավանդման գործընթացում	10
Եզրակացություն	14
Օգտագործված գրականության ցանկ	16

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Այսօր ժամանակակից մանկավարժությունը թելադրում է սովորողակենտրոն, նոր տեխնոլոգիաներով և գործնական պարապմունքներով հագեցած դասապրոցեսի անցկացում, որի վառ օրինակ է համարվում պրոբլեմային ուսուցման մեթոդիկան: Բացի ավանդական գիտելիքներով զինելուց, այն նպատակ ունի զարգացնել աշակերտի ինքնուրույնությունը, լինել անկաշկանդ և ստեղծագործող:

Այսօր մեր խնդիրը, ոչ միայն առարկայական պրոբլեմային ուսուցումն է, այլ տարբեր առարկաների հիմքի և փորձի վրա, սովորողին ապագայում պետության և աշխարհի քաղաքացի դարձնելն է, որ նա անտարբեր չլինի նաև գլոբալ խնդիրների նկատմամբ. խաղաղապահություն, շրջակա միջավայրի պահպանում, առողջ սնունդ, ջրային և էներգետիկ պաշարներ և այլն:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Սույն աշխատանքի նպատակն է՝

- ուսումնասիրել պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում:

Աշխատանքը գրելու ընթացքում առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- ներկայացնել պրոբլեմային ուսուցման սահմանումը, էությունը և նպատակը:
- հասկանալ՝ ի՞նչ է իրենից ենթադրում պրոբլեմային հարցը և իրավիճակը:
- բացահայտել սովորական և պրոբլեմային հարցերի տարբերությունները:
- լուսաբանել կոնկրետ օրինակով կիրառումը պատմությունն առարկայի դասավանդման ընթացքում:

Ուսումնասիրության օբյեկտն ու առարկան: Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը լայն իմաստով պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունն է, ավելի նեղ իմաստով «Հայկական հարցը» այս նախագծում: Որպես առարկա ուսումնասիրվել է «Հայկական հարցը» պրոբլեմային ուսուցման մեթոդաբանության համատեքստում:

Ուսումնասիրության մեթոդական մոտեցումները: Աշխատանքի առաջին գլխում պրոբլեմային ուսուցման բուն եղությունը ուսումնասիրելիս օգտագործել ենք պատմական-փաստարկման և բովանդակային վերլուծությունների մեթոդները: Երկրորդ գլխում «Հայկական հարցը», որպես պրոբլեմային խնդիր ներկայացնելիս կիրառել ենք իրադարձային, վերլուծական մեթոդները, ինչպես նաև փորձել ենք ներառել սեփական մոտեցումներն ու եզրակացությունները քննարկվող հարցերի շուրջ:

Օգտագործված գրականության համառոտ տեսություն: Աշխատանքի թեման մինչև այժմ շարունակում է մնալ կրթական գործընթացն իրականացնող մասնագետների ուշադրության կենտրոնում իր հետաքրքիր և սովորողակենտրոն եղության պատճառով: Աշխատանքի արդիական լինելու պատճառով հիմնականում օգտվել ենք տեղեկատվական-վերլուծական բնույթի հոդվածներից:

Թեման ուսումնասիրելու և վերլուծելու համար օգտվել ենք հայկական¹ ամերիկյան², ռուսական³ աղբյուրներից:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Առաջին գլխում խոսվում է պրոբլեմային ուսուցման եղությունից, նպատակներից և մակարդակներից:

Երկրորդ գլխում խոսվում է պրոբլեմային ուսուցման մեթոդաբանության շրջանակներում պատմությունն առարկայի դասավանդման գործընթացի կազմակերպումը՝ կոնկրետ օրինակ վերցնելով «Հայկական հարցը», որպես պրոբլեմային ուսուցման թեմա:

Աշխատանքը բաղկացած է 16 տպագիր էջից:

¹ Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն», Երևան, 2004:

² Barrett T., Understanding problem-based learning. January 2006.

https://www.researchgate.net/publication/242683636_Understanding_problem-based_learning

³ Теоретические основы технологии проблемного обучения, стр. 6,

<https://elibr.pnzgu.ru/files/eb/doc/KP3EUEtMnoMI.pdf>

Գլուխ 1. Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը

1.1 Ի՞նչ է պրոբլեմային ուսուցումը. Էությունն ու նպատակները

Ի տարբերություն ավանդական, պասիվ և անհատական ուսուցման մեթոդների, պրոբլեմային ուսուցումը սովորողակենտրոն կրթական մեթոդ է, որը հիմնված է Էվրիստիկայի և համագործակցության սկզբունքների վրա: Այն համարվում է արդյունավետ ուսուցման մեթոդ ընդհանուր և մասնագիտական կրթության մեջ⁴:

Պրոբլեմային ուսուցման հիմնական նպատակը սովորողների տրամաբանական մտածողության և ստեղծագործական գործունեության զարգացումն է, որն իրականացվում է պրոբլեմային խնդիրներ լուծելու և նմանատիպ իրավիճակներ հաղթահարելու միջոցով: Ինչ վերաբերում է ուսուցման այս մեթոդի էությանը, ապա այն հենց պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է:

Ըստ Ամիրջանյանի, պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները, ուսուցչի ղեկավարությամբ, իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ Էվրիստիկական, հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրենց մտահանգումներն ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի⁵:

Պրոբլեմային ուսուցման մեթոդիկան իրականում մանկավարժական նոր երևույթ չէ: Խնդրի վրա հիմնված ուսուցման տարրերին անդրադարձել էր դեռևս Սոկրատեսը: Պրոբլեմային ուսուցումը հիմնականում անցկացվում է փոքր խմբերով և ուսուցիչը, որպես այդպիսին, անմիջականորեն չի վարում քննարկումը: Փոխարենը նա կարևոր դեր է խաղում դրական մթնոլորտ ստեղծելու և քննարկումը հեշտացնելու գործում: Այսպիսով, պրոբլեմային ուսուցման կենտրոնում ոչ թե ուսուցիչն է այլ աշակերտը:

Ելնելով պրոբլեմային ուսուցման (այսուհետ ՊՈԻ) գործընթացում աշակերտների կատարողականից՝ նրանց կարելի է դասակարգել 4 կատեգորիաների.

⁴ The Kaohsiung journal of medical sciences 24(3 Suppl), Socrates, Problem-based Learning and Critical Thinking—A Philosophic Point of View, April 2008, p. 6, file:///C:/Users/Admin/Downloads/Socrates_Problem-based_Learning_and_Critical_Think.pdf

⁵ Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն», Երևան, 2004, էջ 228:

1. Աշակերտը որպես ուսումնական խմբի անդամ
2. Աշակերտը որպես ուսուցիչ
3. Աշակերտը որպես քննադատական մտածող
4. Աշակերտը որպես սովորող:

Սովորողների այս դերերը ոչ միայն հանգեցնում են բոլոր մասնակիցների միջև ինտերակտիվ հարաբերությունների, այլև հնարավորություն են տալիս լինել օբյեկտիվ և քննադատաբար մտածել: Եթե գործընթացը դիտարկենք որպես խաղ, ապա խաղացողն աշակերտն է, իսկ մրցավարը ուսուցիչն է, ով հետևում է կանոնների պահպանմանը գործողության ողջ ընթացքում: ՊՈԻ գործընթացում ամենահետաքրքիրը խաղացողների կողմից հնչեցված հարցերն են ու դրանց պատասխանների որոնումը: Կարճ ասած, խաղի իմաստը կայանում է պատասխանների բացակայության մեջ, և այդ բացակայությունը հնարավորություն է տալիս խաղացողներին ազատ պատկերացնել պատասխանը:

Այս մեթոդիկայի գործածման առավելություններից մեկն այն է, որ ինտենսիվացնում է ուսուցումը և արագացնում նրա տեմպը, ինչպես նաև բարձրացնում է աշակերտների ինքնուրույնությունը, լայնացնում հետազոտական աշխատանքներ կատարելու ոլորտը և ծանոթացնում է գիտական մեթոդներին:

Պրոբլեմային ուսուցման մեթոդիկայի առավելությունների մասին խոսելիս, վստահաբար կարող ենք նշել նաև, որ այն բարձրացնում է հաղորդակցման հմտությունները՝ հատկապես երբ կիրառվում է խմբակային աշխատանքի մեթոդը: Աշակերտները նաև սովորում են գնահատել, արդյո՞ք խումբը բավարար առաջընթաց է գրանցել հետազոտական հարցերին պատասխանելու ուղղությամբ և աշխատել խմբի ներսում՝ ավելի շատ առաջընթաց ապահովելու համար⁶:

ՊՈԻ մեթոդաբանությունն ուսումնասիրելիս հարկ է անդրադառնալ մի քանի կարևոր հասկացությունների. ի՞նչ է պրոբլեմային խնդիրը և ի՞նչ է պրոբլեմային հարցը:

Պրոբլեմային խնդիրը որոնելի անհայտից բխող ենթապրոբլեմների ու պրոբլեմային հարցերի հասկացությունն է, դրանց ամբողջականությունը կամ միագումարությունը, որն առաջանում է պրոբլեմային իրավիճակներ⁷: Պրոբլեմային հարցն էլ այն հարցն է,

⁶ Becton L., Guide on Problem Based Learning, <https://www.educationcorner.com/problem-based-learning-guide.html>

⁷ Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն», Երևան, 2004, էջ 230:

որի պատասխանը աշակերտների գիտելիքներում չկա և ոչ էլ առկա է ինֆորմացիում: Այսինքն տվյալ հարցն առաջացնում է դժվար կացություն, պրոբլեմային իրավիճակ:

Պիցուք բերենք մեկ օրինակ. «Ո՞րքան էր Մեծ Հայքի տարածքը» հարցը սովորական հարց է, ունի հստակ մեկ պատասխան, չի պարունակում նոր գիտելիքներ կամ որոնելի անհայտ: Իսկ եթե հարցը ձևակերպվի այսպես. «Ինչպե՞ս 300 հզ. կմ²-ից հասանք 30 հզ. կմ²», ապա կառաջանա պրոբլեմային իրավիճակ, որտեղ աշակերտները կհնչեցնեն տարբեր կարծիքներ, նույնիսկ կարող է հանգեցնել բանավեճի:

Պետք է նշել նաև, որ հարցը պետք է ճիշտ ձևակերպված լինի և անպայման պարունակի որոնելի անհայտներ և ենթադրի որոնել գործողության նոր եղանակներ, ինչպես նաև կարևոր է ուսումնական կյուլթի տրամաբանությունը, քանի որ ոչ բոլոր կյուլթերը կարող են առաջացնել պրոբլեմային իրավիճակ և հնարավորություն կտան առաջ քաշել պրոբլեմային հարցեր:

Խնդիրները կարող են տարբեր լինել չափերով՝ ուսման տևողության առումով: Որոշ խնդիրներ նախատեսված են երկու ձեռնարկում լուծելու համար, որոշներն էլ շաբաթներ կամ ամիսներ կարող են տևել: Երբեմն ձևաչափը փոխելու և ավելի հետաքրքիր դարձնելու համար կարելի է կիրառել երկխոսություններ, դիագրամաներ, ամսագրերից վերցված հոդվածներ, վիդեոներ, ֆիզիկական օբյեկտներ և այլն⁸:

1.2 Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի մեթոդներն ու տեսակները

Մեր ժամանակներում գոյություն ունեն պրոբլեմային ուսուցման երեք հիմնական մեթոդ՝ խնդրի ներկայացում, մասնակի որոնողական (հետազոտական) գործունեություն և անկախ հետազոտական գործունեություն⁹:

Ամենապարզ մեթոդը դասախոսության կյուլթի խնդրահարույց ձևակերպումն է, երբ ուսուցիչը բարձրացնում է խնդրահարույց հարցեր, կառուցում և լուծում դրանք, աշակերտները միայն մտավոր մասնակցում են լուծում գտնելու գործընթացին:

Մասնակի հետազոտական մեթոդը աստիճանաբար սովորողներին ծանոթացնում է անկախ խնդիրների լուծմանը: Խնդրահարույց սեմինարների, գործնական

⁸ Barrett T., Understanding problem-based learning, January 2006, p. 17.

https://www.researchgate.net/publication/242683636_Understanding_problem-based_learning

⁹ Теоретические основы технологии проблемного обучения, стр. 6,

<https://elib.pnzgu.ru/files/eb/doc/KP3EUEtMnoMI.pdf>

պարապմունքների, Էվրիստիկ¹⁰ գրույցների ընթացքում աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ լուծում են խնդիրները¹¹:

Մասնակի հետազոտման մեթոդները պահանջում են աշակերտների մտավոր գործունեություն, ստեղծագործական որոնում, սեփական փորձի և կուտակված գիտելիքների վերլուծություն, մասնակի եզրակացություններ և լուծումներ ընդհանրացնելու ունակություն: Այս մեթոդը պահանջում է ուսուցչի կողմից ուսումնական նյութի լավ իմացություն, սովորողների հետ ուսումնասիրության մեջ կապ հաստատելու և պահպանելու կարողություն, համագործակցության մթնոլորտ ստեղծելու ունակություն:

Խնդրահարույց հարցերի առաջ քաշելը հիմնականում կիրառվում է աշակերտներին առարկային ավելի մոտեցնելու և ուսուցման գործընթացն ամրապնդելու նպատակով:

Կրթական բարեփոխումները կապված են մանկավարժական նոր տեխնոլոգիաների գործնականում ներդրման հետ: Պետք է դասավանդել այնպես, որ դասը ոչ միայն զինի սովորողներին գիտելիքներով և հմտություններով, այլև հետաքրքրությունն առաջացնի կարգապահության նկատմամբ, իսկական ոգևորություն ճանաչողության գործընթացի նկատմամբ և ձևավորի ստեղծագործական գիտակցություն:

1.3 Պրոբլեմային ուսուցման մակարդակները

Ժամանակակից դիդակտիկայում¹² գործադրվում են պրոբլեմային ուսուցման երեք մակարդակներ:

Առաջին մակարդակում ուսուցիչն առաջ է քաշում պրոբլեմը, հստակ ձևակերպում է այն և աշակերտներին ուղղորդում դեպի լուծման ուղիների ինքնուրույն որոնումները: Այս մակարդակում չի բացառվում, որ ուսուցիչն ինքն առաջադրի պրոբլեմը, ձևակերպի, լուծի և աշակերտներին ցույց տա պրոբլեմի լուծման ուղիները¹³:

¹⁰ Էվրիստիկա (հին հունարեն՝ εὐρίστω- «գտնում եմ», «հայտնաբերում եմ»), գիտական ոլորտ, որն ուսումնասիրում է ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները:

¹¹ Теоретические основы технологии проблемного обучения, стр. 6,
<https://elib.pnzgu.ru/files/eb/doc/KP3EUEtMnoMI.pdf>

¹² Դիդակտիկա (հունարեն՝ διδακτικός-ուսուցանող), մանկավարժության բաժին, որը մշակում է ուսուցման և կրթության տեսությունը:

¹³ Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն», Երևան, 2004, էջ 235:

Երկրորդ մակարդակի դեպքում ձևակերպում է պրոբլեմը ինքնուրույն և ինքնուրույն էլ լուծում այն, իսկ ուսուցիչը միայն նշում է խնդիրը¹⁴:

Երրորդ մակարդակում ուսուցիչը չի նշում պրոբլեմը և աշակերտն ինքն է գտնում, ձևակերպում, հետազոտում լուծման հնարավորություններն ու եղանակները: Այսպիսով այս մակարդակն ի տարբերություն առաջին երկուսի զարգացնում է աշակերտի ինքնուրույնությունը, որն էլ ավելի դրական է անդրադառնում նյութի սերտման և ամրապնդման գործում:

¹⁴ Կարող ենք հստակ նշել, որ այս մակարդակում կիրառվում է ՊՈԻ մեթոդիկայի և՛ դաստիարակչական, և՛ զարգացնող ֆունկցիաները:

Գլուխ 2. Պրոբլեմային ուսուցման կիրառումը պատմությունն առարկայի դասավանդման գործընթացում

Արդի աշխարհում, երբ յուրաքանչյուր ակընթարթում նոր աշխարհաքաղաքական, էթնիկ, կրոնական փոփոխություններ և այլ գործընթացներ են տեղի ունենում շատ կարևորվում է ժամանակին համընթաց քայլերը: Այս սրընթաց զարգացումը նոր խնդիրներ և նոր մոտեցումներ է առաջացնում նաև մանկավարժության մեջ: Ուսուցիչը նույնպես պետք է գործի ժամանակի պահանջներին համապատասխան՝ օգտագործելով նոր մեթոդներ և հմտություններ:

Պրոբլեմային ուսուցման մեթոդը շատ լավ կարելի է կիրառել պատմությունն առարկայի շրջանակներում: Պատմությունն ինքն իրենով շատ կնճռոտ, անհասկանալի, լիովին չբացահայտված էջեր ունի: Դասապրոցեսի ընթացքում շատ թեմաներ ուսումնասիրելիս կարելի է թեմայի շուրջ պրոբլեմային իրավիճակ ստեղծել, հարցեր ձևավորել, խնդիրներ առաջարկել: Այնուհետև տարբեր հմտություններ ձևավորելով, մեխանիզմներ զարգացնել, սովորողին հնարավորություն տալ երևույթը ուսումնասիրել, մեկնաբանել, համեմատել, վերլուծել, լսել ընկերների կարծիքը, դիրքորոշվել և եզրահանգման գալ:

Պրոբլեմային ուսուցման ժամանակ նախ ուսուցիչը պետք է թեման ընտրի, պրոբլեմ տեսնի, հարց կամ հարցեր ձևակերպի: Թեման պետք է ընտրել այնպես, որ այն հստակ, վերջնական պատասխան չունենա կամ չավարտված իրավիճակ լինի: Իհարկե այս ամենին հասնելու համար սովորողին թեմայի շրջանակներում գիտելիքներ պետք է տալ: Երեխան պետք է սովորի աշխատել սկզբնաղբյուրների և գրականության հետ, որպեսզի ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ և հետաքրքիր դառնա:

Սկզբնաղբյուրներում էլ հանդիպում ենք տարածայնություններ, տարբեր տեսակետներ և կարծիքներ: Նույնիսկ ականատես հեղինակների մոտ, նույն իրադարձությունների և խնդիրների շուրջ հակասություններ ենք տեսնում: Այդ իսկ պատճառով մասնավորապես սկզբնաղբյուրների հետ աշխատանքը սովորողին մեծ հնարավորություն է տալիս թեմայի շուրջ գիտելիքներ ձևավորել, ծանոթանալ հակասություններին և տարածայնություններին և այդ ամենը դասապրոցեսին բերել քննարկման դաշտ: Այսինքն պրոբլեմային ուսուցման ժամանակ զարգանում է

սովորողի ոչ միայն գիտելիքները, այլ նաև գիտելիքի ճիշտ կիրառումը, վերլուծելու կարողությունը, ինքնուրույն ստեղծագործելը:

Պրոբլեմային ուսուցման ժամանակ, եթե պրոբլեմից մի քանի հարց է առաջանում, կարելի է դասարանը խմբերի բաժանել: Խմբակային աշխատանքի շրջանակներում աշակերտը սովորում է սովորեցնել: Խմբերը իրենք են հարթ թվացող հարցերի մեջ ծալքեր տեսնում և փորձում յուրովի պարզաբանել:

Կոնկրետ եթե վերցնենք «Հայկական հարցը», ապա այն իր ծագմամբ, բովանդակությամբ հայոց պատմագիտության մեջ գոյություն ունեցող տեսակետներով ամբողջովին պրոբլեմային ուսուցման թեմա է: Ինչպես պնդում է Լեոն. «Հայկական հարցը նույնքան հին է, որքան հայ ազգը...Այսպիսով հայոց հարցի պատմությունը հայ ազգի պատմությունն է. սկզբից մինչև մեր օրերը»¹⁵: Կամ ինչպես Արման Կիրակոսյանն էասում. «Հայկական հարցը հայ ժողովրդի պատմության պրոբլեմների համակարգ է...»¹⁶:

Պրոբլեմային ուսուցման մեթոդով «Հայկական հարցի» արծարծումը նպատակ ունի վեր հանել թեմայի ծագումը, միջազգայնացումը, խոշոր տերությունների կողմից հարցի շահարկումը և ի վերջո հարցի առանձնահատկությունը: Պրոբլեմից մի քանի հարց առաջացնել.

1. Ինչու՞ միջազգային, գլոբալ հարցը դարձավ լոկալ հարց:

2. Ինչու՞ Արևմտյան Հայաստանին վերաբերող այս հարցը ժամանակի և տարածության մեջ հասավ Արևելյան Հայաստան, այսինքն Հայաստանի Հանրապետություն և դարձավ արդիական հարց:

3. Ինչպե՞ս եք տեսնում Հայկական հարցի լուծման ուղիները: Ներկայացրեք Ձեր փաստարկները, պահանջները և խնդրի լուծման ճանապարհները:

Սովորողը, որպեսզի կարողանա պատասխանել հարցերին և դասին ակտիվ մասնակցել, պետք է հետազոտական աշխատանք տանի, փնտրի, գտնի իրեն հուզող հարցերի պատասխանը, հարգելով ընկերների այլակարծությունը, փորձի առողջ բանավեճի միջոցով հիմնավորել իր տեսակետը և յուրովի եզրահանգման գալ:

¹⁵ Լեո, Հայկական հարցի վավերագրերը, Երևան, 2014թ., էջ 5:

¹⁶ Կիրակոսյան Ա., Հայկական հարցը, հանրագիտարան, Երևան, 1991, էջ 9:

Սովորողը պրոբլեմի հարցերը պարզաբանելով պետք է կարողանա վեր հանել այն գաղափարը, որ «Հայկական հարցը» դա պահանջ չէ, դա ազգի գոյատևման, ազգային գաղափարախոսության հիմնախնդիրն է:

Սովորողն ի վերջո պետք է ճանապարհ գտնի Հայկական հարցի ենթադրյալ լուծման համար և կարողանա բերել տնտեսական, մշակութային, ռազմական, ժողովրդագրական և այլ պատճառներ: Դրան հասնելու համար միջառարկայական և ներառարկայական կապերը:

«Հայկական հարցը» ամբողջովին պրոբլեմային ուսուցման թեմա է նաև այն իմաստով, թե ո՞ր տեսանկյունից ենք այդ պրոբլեմը հարց դարձնում:

1. «Հայկական հարցը» հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարն է հանուն ազգային պետականության վերականգնման:

2. «Հայկական հարցը» որքանով հիմնախնդիր դարձավ Օսմանյան Թուրքիայում, որ հարցի «լուծումը» նրանք տեսան հայ ժողովրդի բնաջնջման հրեշավոր իրենց ծրագրով:

Այս տեսանկյունից պրոբլեմի վեր հանումը ունի ոչ միայն ուսուցողական, այլ նաև հայրենասիրական դաստիարակչական մեծ նշանակություն: Դա հնարավորություն կտա ապագա սերունդներին դաստիարակելու, մարդու և ժողովուրդների բնական իրավունքները հարգելու քաղաքակիրթ, հայրենասեր և ի վերջո մարդասեր դարձնելու:

Պատմության դասերին պարբերաբար պրոբլեմային ուսուցման մեթոդը կիրառելիս թեմաները սովորողների համար դառնում է ել ավելի հետաքրքիր: Դասապրոցեսը դառնում է աշակերտակենտրոն: Ստեղծվում է մի միջավայր, որտեղ աշակերտն իրեն զգում է հետազոտող, քննարկող, որոշումներ կայացնող: Ակտիվանում է նրա մտածելու, համակողմանի իմացությունը վեր հանելու գաղափարը: Դա կօգնի նրան հետազայում, որպես ապագա քաղաքացի, ակտիվ դիրքորոշում ունենալ պատմությունից դասեր քաղելու ունակությանը: Շատ կարևոր է նաև այն, որ սովորողը կարողանա կարևորել ազգային արժեքները և այն տեսնել համամարդկային իրականության մեջ: Այսինքն, լրկալ և գլոբալ հարցերն իրարից զանազանելով՝ միևնույն ժամանակ փորձի տեսնել նույն հարթության մեջ:

Փաստորեն, պատմության առարկայի ժամերին պրոբլեմային ուսուցման մեթոդը կիրառելիս, երեխայի մոտ կձևավորվի ոչ միայն ազգային, այլև համամարդկային պրոբլեմներ լուծելու սեփական ձգտումն ու ցանկությունը: Ինչպես նաև, «Ես»-ի և «Մենք»-ի ճանաչողական ակտիվությունը կառուցելու հմտությունը:

Ուսուցիչը ուսուցումը կազմակերպում է պրոբլեմային ժամանակագրական սկզբունքով: Տարբեր ժամանակահատվածներում պատմության երևույթները և իրադարձությունները կրկնվելու սովորություն ունեն: Պետք է պրոբլեմային ուսուցման մեթոդը կիրառելիս ուսուցիչը կարողանա սովորողների միջոցով վեր հանել դրանց միջև եղած փոխադարձ կապը, օրինաչափությունը, հակասող և համադրող կողմերը, պատճառահետևանքային կապը. այսինքն հիմնվելով մանկավարժական շտեմարաններում գոյություն ունեցող ավանդական որոշ մեթոդների վրա, օգտագործելով գործիքներ, նոր հնարքներ, արդի ժամանակաշրջանին համապատասխան նոր մեթոդներ: Իհարկե յուրաքանչյուր թեմային համապատասխան, կապված դասի տիպային կառուցվածքից, թեմայի յուրահատկությունից: Կարևոր է նաև սովորողների հետաքրքրության և կարողության շրջանակը, թե ինչքանով է աշակերտը պատրաստ մասնակցել պրոբլեմային ուսուցմանը:

Եզրակացություն

Պրոբլեմային ուսուցման մեթոդիկան ուսումնասիրելիս հանգեցինք հետևյալին՝

- Պրոբլեմային ուսուցման մեթոդիկան աշակերտակենտրոն է և դարձնում է ուսումնական գործընթացն ավելի հետաքրքիր:
- Սովորողները կարող են հերթով խաղալ տարբեր դերեր, որպես ուսումնական խմբի անդամ, ուսուցիչ, քննադատ և սովորող: Յուրաքանչյուր դերում սովորողը տարբեր տեսակետներ է տալիս միևնույն թեմայի շուրջ:
- ՊՈՒ-ն նպատակ չունի զարգացնել մասնագիտական գիտելիքները, փոխարենը այն պահպանում է սովորողի հետաքրքրասիրությունը ՊՈՒ գործընթացում խթանելով ստեղծագործական ունակությունները:
- Այն հիմնված է գործնականության վրա: Այլ կերպ ասած, յուրաքանչյուր սովորողի եզակիությունն է տանում ՊՈՒ վերջնական արդյունքի:
- Ընդհանուր առմամբ, ՊՈՒ մեթոդիկան ակտիվացնում է ուսումնական գործընթացը, բարձրացնում արդյունավետությունը, ինչպես նաև, հնարավորություն է տալիս զարգացնելու սովորողների ինքնուրույնությունն ու ստեղծագործական ընդունակությունները:
- Ուսումնական բուն նյութը ՊՈՒ գործընթացում դառնում է ապացուցելի, իսկ ամբողջական գործընթացը ավելի հուզական:
- Տալիս է միջառարկայական, միջգիտական կապերից օգտվելու հնարավորություն, ինչպես նաև ձեռքբերված գիտելիքների ավելի լավ ամրապնդում և պահպանում:
- Պրոբլեմը լուծում պահանջող խնդիր է: Պրոբլեմի ճիշտ, մատչելի ձևակերպումը պայմաններ է ստեղծում հետազոտական և մեթոդաբանական ուղիներով հասնելու խնդրի լուծմանը: Խնդրի լուծման համար պետք է պրոբլեմային իրավիճակ, հարթակ ստեղծել, իսկ իրավիճակից դուրս գալու համար պետք է զարգացնել զննողականությունը, բանականությունը, մտածողությունը, ճանաչողականությունը և ամենակարևորը՝ ինքնուրույնությունը:
- ՊՈՒ մեթոդիկան ունի մի շարք առավելություններ, որոնցից է աշխատանքի խմբային մոտեցումը: Խմբային աշխատանքով զբաղվող աշակերտները սովորաբար ունենում են ավելի բարձր ակադեմիական նվաճումներ՝ համեատած անհատական աշխատանք կատարողների: Այն ուսուցիչները, ովքեր ցանկանում

են բարելավել ուսումնական արդյունքները իրենց աշակերտների շրջանում, կարող են կիրառել պրոբլեմային ուսուցման մեթոդիկան՝ ապավինելով խմբակային աշխատանքի ասպեկտին: Վերջինս բարելավում է նաև սովորողների հաղորդակցման հմտությունները:

- ՊՈԲ մեթոդներն ուսումնասիրելիս հանգեցինք նրան, որ շեղվելով դասապրոցեսի ավանդական մատուցման մեթոդներից այն հնարավորություն է տալիս հետաքրքրություն և ոգևորություն առաջացնելու աշակերտի մոտ և ձևավորում է նրա ստեղծագործական գիտակցությունը:
- ՊՈԲ երեք մակարդակներից ամենաարդյունավետը երրորդն է, քանի որ ի տարբերություն առաջին երկուսի այն կոնկրետ զարգացնում է աշակերտի ինքնուրույնությունը, որն էլ ավելի դրական է անդրադառնում պրոբլեմային Նյուլթի սերտման և ամրապնդման գործում:
- Պրոբլեմային ուսուցման մեթոդը շատ լավ կիրառելի է պատմություն առարկայի շրջանակներում: Դասապրոցեսի ընթացքում շատ թեմաներ ուսումնասիրելիս կարելի է թեմայի շուրջ պրոբլեմային իրավիճակ ստեղծել, հարցեր ձևավորել, խնդիրներ առաջարկել: Այնուհետև տարբեր հմտություններ ձևավորելով, մեխանիզմներ զարգացնել, սովորողին հնարավորություն տալ երևույթը ուսումնասիրել, մեկնաբանել, համեմատել, վերլուծել, լսել ընկերների կարծիքը, դիրքորոշվել և եզրահանգման գալ:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն», Երևան, 2004:
2. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, 2005:
3. Լեո, Հայկական հարցի վավերագրերը, Երևան, 2014:
4. Կիրակոսյան Ա., Հայկական հարցը, հանրագիտարան, Երևան, 1991:
5. Подласый И. П. Педагогика, Москва, 2002, Книга 1,2:
6. Теоретические основы технологии проблемного обучения,
<https://elib.pnzgu.ru/files/eb/doc/KP3EUEtMnoMI.pdf>
7. Barrett T., Understanding problem-based learning. January 2006.
https://www.researchgate.net/publication/242683636_Understanding_problem-based_learning
8. Becton L., Guide on Problem Based Learning,
<https://www.educationcorner.com/problem-based-learning-guide.html>
9. The Kaohsiung journal of medical sciences 24(3 Suppl), Socrates, Problem-based Learning and Critical Thinking—A Philosophic Point of View, April 2008,
file:///C:/Users/Admin/Downloads/Socrates_Problem-based_Learning_and_Critical_Think.pdf